

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ՏՆՕՐԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ



ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՈԶԱՃԵԱՆ

Գ. ՅԵԶԱՆ

1899 ԴԵԿՏԵՄԲԵՐ 25

ԹԻՐ 75

„هازه كيداق“ عزه تسي

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոստյ համար

50 Ղրշ.

Դառառաց համար

60 »

Արտասահման

15 Ֆրպ.

ՔՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն

Քաղ. Պատմ. Ժամանակակից Եւրոպիոյ

Առնետն ու ժանտախտը

Դրական էջեր

Քաղաքական Տեսութիւն

Դրուագներ

Ոգեաց Արքայն (Գերմ. Բանաստեղծութիւն)

Սիրոյ Խոհալը (Բանաստեղծութիւն)

Գ. Ե.

ԹԷՈՂԻԿ

Խ. Յ. Պ.

Ա. Լ.

40 փարայ 40

Տպագր. «ԾԱՂԻԿ» Օրսերքի
և Պոլիս, Դալարիա, Համոթի. Փաղա խան

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

521 EAST 58TH STREET, CHICAGO, ILL. 60637

RECEIVED

NOV 1964

PHYSICS DEPARTMENT

11-11-64

521 EAST 58TH STREET

CHICAGO, ILL. 60637

TO THE PHYSICS DEPARTMENT

FROM THE PHYSICS DEPARTMENT

RECEIVED

NOV 19 1964

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

521 EAST 58TH STREET

CHICAGO, ILL. 60637

11-11-64

RECEIVED

11-11-64

PHYSICS DEPARTMENT

11-11-64

521 EAST 58TH STREET

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ՏՆՕՐԷՆ

ԵՐՈՒՍՆԴ ՏԵՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ



ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. ՇՐՋԱՆ

1899 ԴԵԿՏԵՄԲԵՐ 25

ԹԵԽ ԴՅ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը. — Կիլիկեան քեմերուն կարեւորութիւնն ու անոնց խնամքը. — Տօնական օրերուն առօրին. — Հօրոյ . . . համետին վրայ.

Կ'ըսուէր թէ Նոր Տարին Կիլիկիոյ Աթոռին վրայ նստած պիտի տեսնէր նոր կաթողիկոսը : Ազգն այս կերպով ուրան չելի կաշանդչէք մը պիտի տար Կիլիկեան թեմականաց : Եւ իրա՛ւ ալ նորրոն տիր կաթողիկոս մը իբրեւ կաշանդի նըւէր ո՛չ միայն յատկանշական է, այլ նաև թանկագին : Եւրոպեան ծառահանութեան մը մէջ ամէնէն աւելի ծափեր պիտի շարժէր այսպիսի նուէր մը յիշեցնող թըղթի կտորն իսկ . որովհետեւ բնական է թէ Երանդեան գիշերը զբօսնող մանկունք իրենցմէ մին պիտի չկախէին շինծու ծառին ճիւղերէն իրրեւ ապագայ կաթողիկոս, այլ զայն յիշեցնող պիտակ մը, ինչպէս վերը ըսինք, թղթի կտոր մը խնամով պիտի ծածկէին Երանդեան Երառին ճիւղերուն մէջ և զայն գիպուածաւ երևան հանողն Արքիմէդէսին պէս հիացմամբ և ապա

շուրթեամբ պիտի գոչէր. “Էվրէքա” — Դսա՛յ, տեսէ՛ք : — Եւ ինդրոյն թատերական կողմն այս պիտի ըլլար .

Ի՛նչ և իցէ, լաւ է անազան քան երբեք . քանի որ մանաւանդ հին տոմարը նորէն մէկ երկոտասանեակ օրեր աւելեաց՝ մը ունի այս տարի ալ գոգցես այդ պիտի ակնկալութեան մը իրականացման վերապահուած միջոց մը, որ իցի՛ւ թէ հրաշքով երկարէր քանի մը երկոտասանեակներ ևս :

Կիլիկեան թեմօրէք անհովիւ են գրէթէ երկար ժամանակներէ ի վեր, հանգուցեալ կաթողիկոսին կենդանութեան միջոցին ալ կարծեմ շատ ծաղկեալ բաներ չէին անոնք հողեւոր միթարուութեան և հողեւոր հսկողութեան տեսակէտով : Անոնք միշտ եկեղեցական խընամք պահանջած են, և ոտկայն հակասական ընթացքի մը ականատես եղած են : Կիլիկեան թեմեր մասնաւոր նշանակութեան արժանի են, քանի որ անոնք լոկ առաջնորդութիւն մը չեն կազմեր, այլ կաթողիկոսութիւն մը համակրաւին մեծագոյրդ նշանակութեամբ : Քանի տարիներ եղաւ որ կաթողիկոսու-

Թեան չըջանակէն դուրս կ'ապրին անոնք տեսալի մը անտարբերութեան մէջ, և ո՛վ գիտէ անոնց կրօնական ու եկեղեցական ապագան ի՞նչ անակնկալներ վերապահած է մեզ, երբ չըջահայեաց և ողջամիտ կաթողիկոս մը վերջապէս երթայ ու դործի սկսի, և իր թեմականներուն հագեւոր վիճակագրութիւնը պատրաստելով զբաղի։ Այո՛, անակնկալներու պատրաստ ըլլանք. և հարկ չկայ ծածկել թէ այդ անակնկալներուն արտաշուքն է մեր թեմականներուն յարումն ուրիշ քրիստոնէական դաւանութեանց։ Բայց նոր կաթողիկոսին կ'ընայ այդ մասին լուսաւորել զմեզ։

Այսպիսի տեսութիւն մը կարծենք ամէնէն բանաւորն է հիմա, — և նոյն իսկ քիչ մը ընդարձակ եղաւ, — Կիլիկիոյ կաթողիկոսութեան յառաջադրանական կարգադրութեանց միջոցին։

Յառաջիկայ — արդէն իսկ գրէթէ սկսուած — տօնական օրերը սոհմային ու և է նկարագիր չունին մեզ համար։ Քրիստոնէական մեծ տօնին նախընթաց Աւագ Տօները չունին մեզ համար Բարեկենդանի Գշ. և Եշ. օրերուն ոգեւորիչ և միութարիչ հանգամանքը։ Տխուր մեղամաղձութեամբ երգուած եկեղեցական երգերն ու շարականք այս քանի մը օրերուն մէջ առ առաւելն քիչ մը մեր ջիղերը թունդ կը հանեն։ Տօնացոյցը պատրաստող նախնիք զուտ ազգային մեծ սուրբերը Բարեկենդանի ալդէն իսկ աւրախ զուարթ օրերուն մէջ տեղաւորել են, Ս. Յովսէփը, Ս. Ղեոնդը, իրենց սարօք, զարմօք, զաւակօք։ Մեք ալ կ'ապասենք նոյն օրերուն մեր հոգեւոր խանդավառութեան յազուրդ տալու համար։

Կրօն. ժողովը արձակուրդ յայտարարեց Ծննդեան տօներուն առթիւ։ Քանի մը խնդիրներու համար առժամանակեայ կարգադրութիւններ ըրաւ, բայց ամուսնական դատերու յանձնաժողովին ընտրութիւնը դարձեալ յետաձգեց։ Հօրոյ դարձեալ ... համեմունք վրայ։ Մարդը

կը պոռայ կը կանչէ, խօսքը մտիկ ընող չկայ, կտրծես Կրօն. ժողովը դիտմամբ կ'ընէ Հօրն սրանեղելու համար, որ այս անգամ կանոնապահ և ճշտապահ կաթողիկոս մը վրէժ կը լուծէ, ամէն ժամանակէ աւելի եռանդով և ոգեւորութեամբ ջրդեղուած։ Բայց վերջապէս Կրօն. ժողովը պարտաւոր է ելք մը տալ կարգ մը ամուսնական դատերու. մեղք են եկող դացող սցյերն ու կիները, Միայն թէ թո՛ղ չի կարծուի որ այսպիսի Յանձնաժողովի մը կազմութիւնը կենթադրէ թէ Հոյ. եկեղեցին ամուսնալուծումը կ'ընդունի կոր. հին է, հին է այդ կարգադրութիւն. Դատաստանական Խորհուրդը միշտ կայ Պատրիարքարանի Օրէնքին մէջ, և անոր պակասը լրացնելու համար Կրօն. ժողովն հարկ դատած է յանձնաժողով մը կազմել, — սոյն ալ Ծնունդէն ետք — առկախ դատերը կարգադրելու նպատակաւ։ Եթէ սակայն անհրաժեշտ է նորագոյն կանոններու պէտքը, հարկաւ Ս. Պատրիարքն ու Կրօն. ժողովը պիտի տեղեկագրեն Ս. Հայրապետին որ միջոցներ ձեռք առնէ, կամ առժամանակեայ հրահանգներ տալ մինչև յետ անօրինութիւն։ Զայ մանաւին առայժմ սա՛ կէտն է թէ Հօրոյի պէս պատմագէտ մը, Տ. Բարդէնի պէս համալսարանական մը ի՞նչպէս չեն կրնար ըմբռնել թէ բարեկարգում ըսուած բանը վայրկենաբար կ'ըլլայ՝ եկեղեցիին մէջ։ Եկեղեցին ա՛յնպիսի ամուր և բիւրեղացած կազմակերպութիւն մ'ունի որ կարելի չէ քանի մը յողուածներով հիմնական փոփոխութիւն մտցնել անոր մէջ։ Եկեղեցիին վարչական կազմութիւնն աւելի հզօր ու բազմաշաղկապ է քան անոր նոյն իսկ զուտ կրօնական վարդապետութիւնները։ Այնպէս չէ՛, եկեղեցական պատմութիւնն ի՞նչ կ'ըսէ այս մասին։ Կարծեմ թէ, եթէ կ'ուզենք հիմնական փոփոխութեան պէս բան մ'ընել մեր ներկայ եկեղեցական վարչութեան մէջ, դարձեալ ընդհանուր դատարարական

թեան պէտք է դիմենք: Կրթական խընդիւրը դարձեալ, այս կէտին մէջ ալ, անխուսափելի դարձանք կրնայ ըլլայ: Միտքերը պատրաստել, ուղիղ և ուղղաժիտ նորութիւններու գետինը պատրաստել: Մինչդեռ այսօր մեր կրթական վիճակ խեղճ է. կրօնի և Եկեղեցւոյ Պատմութեան ուսումն երբեք չկայ մեր վարժարաններուն մէջ: Տղայք եղածէն, ըլլալիքէն տեղեկութիւն չունին. անոնք կը մեծնան կա՛մ իրենց ծնողաց կողմէն անգիտակից մոլեռանդութեան մէջ կամ սկեպտիկի հովեր առնելով՝ անկրօն կը դառնան և անտարբեր կը մնան ու է բարեփոխութեան առջեւ: Բարքերը նախ պէտք է ազնուացնել, միտքերը կրթել, հրահանգել, բաղձացուած բարենորոգումները մտցնելու համար մեր եկեղեցիին մէջ: Ասոր համար ալ ժամանակ պէտք է, դիւրութիւններ պէտք են, բարոյական և նիւթական հանգստութիւն պէտք է: Տնտեսական, դրամական և այլ տագնապներու միջոցին այսպիսի խնդիրներ յարուցանել ո՛չ միայն անխոհեմութիւն է, այլ նաև ՏՂԱՅՈՒԹԻՒՆ: Կ'ուզէ՞ք միտքերը պատրաստել տան—տաննահինգ տարիներէ ետք ժամանակի մը համար շինիչ յօդուածներ հրատարակեցէք. բարոյական պատմութիւններ ըրէք. ճշմարիտ հաւատացեալի մը օրինակելի վարքն ու բարքը ցոյց տուէք, որպէս զի ձեր վրայ վստահ ըլլան թէ ասոնք անանկ մարդիկներ են որ իրաւամբ Եկեղեցիին սիրով հրահրուած կը խօսին: Հրապարակի վրայ ձեր անկեղծութեան, ձեր անշահախնդրութեան, և ձեզ կրօնական—բարոյականին մասին սրբութեան ապացոյցը չտուած, ներքի չէ կարծել որ ձեր առաջարկած նորութիւնք անգամ օգտակար ըլլան մեզ, ինչ պայմաններով որ կուտաք զանոնք մեզ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՒՐՈՊԵՈՅ

(Շար. տե՛ս թիւ 74, Ա.)

Հոլային կարգադրութեանց վերջնապէս առաջ, խնայուեցաւ թէ Նարոյէոն Ֆրանսա վերադարձած էր: Լիազօրք համաձայնեցան յանուն Եւրոպիոյ յայտարարելու թէ Նաբոյէոն Պոնապարտ քաղաքային ու ընկերական յարաբերութիւններէ արտաքսուած եւ հանրային վրիժառութեան մատնուած էր, իբրեւ թշնամի ու խանգարիչ աշխարհի խաղաղութեան: Կը խոստանային Ֆրանսայի թագաւորին օգնել ընդդէմ Նաբոյէոնի կամ յարձակում կրող ուրիշ ու է Էկառալարութեան (1815 Մարտ 13): Յետոյ իութացին պատրաստել Վիեննայի Վեհաժողովին վերջնական դաշնագիրը, որ ստորագրուեցաւ «Նախապատրաստական Յանձնաժողովը» կողմէն ու թ պետութեանց կողմէ, և միւս պետութիւնք ալ հրաւիրուեցան իրենց հաւանութիւնը տալու, Այդ դաշնագրին մէջ ներմուծեցին գետերու ազատ նաւարկութեան պայմանագիրն և Հոլանտայի ու Զուիցերիոյ չէղբացման երաշխաւորութիւնը:

Վաղերըյի ճակատամարտէն վերջ, երբ Նաբոյէոնի զօրութիւնը խորտակուեցաւ, Դաշնակիցք վերստին զաղտնի խորհրդակցութիւններ կատարեցին, Ֆրանսայի դէմ ձեռք առնուելիք երաշխաւորութիւններն ուրջելու համար: Ամենքն ալ համաձայնեցան սա կէտին վրայ թէ պէտք է Ֆրանսական հողը զբաւել զրամական հատուցում ստանալ և անոր երկիրներուն մէկ մասն իրենց մէջ բաժնել: Սակայն իրենց բաժիններուն վրայ համաձայն չէին: Երկու Գերման Պետութիւնք, Բրուսիա և Աւստրիա, որք աւելի ուղղակի փնտռուած էին, կը պահանջէին Ալզասը, մինչեւ իսկ Լոռէնը և Ֆրանտրիան: Իսկ Անգլիա և Ռուսիա կը պահանջէին միայն որ Սափուա տրուի Սարտենիոյ թագաւորին, ինչպէս նաեւ սահմանագլխի ուղղութիւններ կուզէին, որով Ֆրանսայի ձեռքէն պիտի առնէին քանի մը բերդաքաղաքներ: Աւստրիա ընդունեց այս վերջին կարգադրութիւնը: Բրուսիա, առանձին մնալով, նախ սպառնա-

ցաւ, ապա զիջում ըրաւ: Դաշնակիցք այն ա-
տեն համաձայնեցան Ֆրանսայի տրուելիք
վերջնագրին վրայ: Այս վերջնագիր, Ֆրան-
սայի ձեռք բերած քանի մը մեղմացումներ
ով, ապա դարձաւ եղաւ Բարիզի դաշնագիրը:
Միեւնոյն ատեն Դաշնակիցք իրենց պետու-
թեանց ապահովութեան և Եւրոպայ ընդ-
հանուր խաղաղութեան համար, մնայուն զիծ
մը որոշեցին խոստանալով իրարու հետ խոր-
հրդակցիլ և համաձայնիլ եթէ յեղաշրջական
սկզբունքները նորէն դային պառակտել
գործնաւ, և միւս տէրութեանց հանդիստը
վրդովել (20 նոյ. 1815):

ԵՒՐՈՊԱ ՔԱՅՔԱՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԵՏՔ

Վիեննայի կարգադրութիւնք ի գործ դըր-
ուած էին տասնևութերորդ դարու զիւա-
նագէտներուն սկզբանց համեմատ, այն է
Եւրոպական հաւասարակշռութիւն և հա-
տուցմանց դրութիւնը: Ֆրանսա չափազանց
հզօր նկատուելով, իր երկրակալութիւննե-
րէն առաջ ունեցած սահմանները միայն պի-
տի վերստանար, հաւասարակշռութիւնը վե-
րահաստատուելու կերպով: Միւս մեծ տէրու-
թիւնք հատուցումներ կամ փոխարինութիւն-
ներ (indemnités) միայն պիտի ստանային, ու-
րիշ պետութիւններու թողուած հողերու ի
փոխարէն: Բայց երկու մեծ տէրութիւնք
պահեցին իրենց երկրակալութիւնները: Անգ-
լիա պահեց զՄալդու և Յոնիական կղզիներ
ը: Ռուսիա պահեց զՊեսարապիա, Ֆինլան-
տիա և Բոլոնիա: Ֆրանսայի զէմ մղուած
պատերազմներուն փոխարէն, այս երկու պե-
տութիւնք հողային պարզ ընդարձակում մը
ձեռք կը բերէին ի մեծ: Չնայած պետու-
թեանց (Վենետիկ և Մալդու) կամ ի մեծ
Ֆրանսայի նախորդ դաշնակիցներուն (Շուէտ
և Բոլոնիա)։—Աւստրիա և Բրուսիա լոկ փոխա-
րինութիւններ կ'ընդունէին: Բոլոնիոյ վերջնա-
կան բաժանումէն վերջ իրենց ունեցած հողա-
յին մեծագոյն տարածութեան վրայ հաշուե-
լով: Աւստրիա Վենետիկի Հանրապետութեան
հողերը կ'առնէր Պելժիոյ փոխարէն: Բրու-
սիա, լեհական երկիրներու փոխարէն, որք
զիւրաւ իւրանալի չէին, ընդունեց երեք գեր-
ման նահանգներ, Վեստֆալիա, Սաքսոնիա և
Հոլշտայն նահանգը: Լաւէնպուրկի փոխարէն
ալ կ'ստանար գիֆմերանիա: Այս երկու պե-
տութիւնք եթէ հողային աւելի ընդարձակ

տարածութիւն մը չէին ստացած, բայց գոնէ
1793էն առաջ իրենց ունեցած սահմաններէն
աւելի ընտիր հողեր և սահմաններ ունէին:
Դերման իշխաններ կը պահէին Նարո-
լէոնի օրով անկախ հրատարակուած եր-
կիրները: Դաշնակիցներուն սիրական փոքր
պետութիւնք հողային ազուր շահեր ըրին:
Օրանժի իշխանն ստացաւ զՊելժիա, Սարտե-
նիոյ թագաւորը՝ զձենովա, Զուիցերիա՝
զԺիւռա և Սալուայի մէկ մասը:

Այս հողային ընդարձակումներն ի գործ
կը դրուէին ի մեծաւ այն փոքր պետութեանց՝
որք անգլուս և անտէր մնացած էին, ինչպէս
ձենովայի և Վենետիկի հանրապետութիւնք,
Դերմանիոյ ազատ քաղաքները, Եկեղեցւոյ
կալուածները, Սաքսոնիա և Տանըմարքա
(երկու դաշնակիցք Նաբոլէոնի): Եւրոպայի
բոլոր եկեղեցական պետութիւնք անհետ
կ'ըլլային, բաց ի Պապին Պետութենէն: Վի-
եննայի Վեհաժողովը մերժած էր Եկեղեցւոյ
միւս իշխաններուն ետ տալ իրենց կալուած-
ները: Պապը բողոքեց Վիեննայի աշխարհական
զիւանագէտներու որոշմանց դէմ, ինչպէս եր-
բեմն Վեստֆալիոյ Վեհաժողովին որոշում-
ները դատապարտած էր:

Ուրեմն Վեհաժողովին գործը պարզ վե-
րահաստատութիւն մը չեղաւ Յեղափոխա-
կան շրջանին աւերումներնու: Դաշնակիցք ըն-
դունեցին զանոնք միայն որք իրենց
գործին կը յարմարէին, և չէին մնասեր ու է
աշխարհական սկզբունքի, և թափուր ու ան-
տէր մնացած երկիրներով ալ ձեւեցին հողա-
յին փոփոխութիւնները: Այս բոլոր գործու-
թեանք կատարուեցան 18րդ դարու սովո-
րութեան համեմատ, այսինքն՝ առանց բնա-
կիչներուն խորհուրդ հարցնելու, առանց ա-
նոնց շահերն ի նկատ առնելու: Դիւանա-
պետք կաւաւարութեանց ներկայացուցիչներն
էին և ոչ թէ ազգերուն:

Այս կերպով վերահաստատուած դրու-
թիւնը, ինչպէս 18րդ դարուն մէջ, կը հանդ-
չէր Եւրոպական հաւասարակշռութեան վրայ
հինգ մեծ տէրութեանց միջեւ, որոց երկուքն
արեւմտեան (Ֆրանսա և Անգլիա) և երեքն
արեւելեան (Ռուսիա, Աւստրիա և Բրուսիա):
Ասոնցմէ ոչ մին այնքան զօրաւոր էր որ կա-
րենար միակ իշխել Եւրոպայի վրայ, և պատե-
րազմ ընել հակառակ միւսներուն: Իրապէս,
հաւասարակշռութիւնն անվթար պահուեցաւ

մինչեւ կէս դար , և խաղաղութիւնն ալ 40 տարի : Այս երկու մեծ խումբերուն միջև կը մնար կեղրոնական երկիր մը , փոքր պետութիւններու բաժնուած , ինչպէս Գերմանիոյ եւ Իտալիոյ մասն պետութիւնները , Հոլանտա , Զուիցերլանտ , որք մեծ տէրութեանց երախաւորութեան ներքեւ չէզոք հրատարակուած էին : Աւստրիա իր ազդեցութեան տակ կը պահէր յօշոտուած կամ մաս մաս բաժնուած երկու երկիրներ , այս է Գերմանիա և Իտալիա , և այլևս մեծնալու պէտք չունենալով իր շահը կը պահանջէր որ այդ երկու երկիրներուն միութիւնն արգելէր : Արեւելքի կողմն Ռուսիա կու տուած էր այն երկիրներն որք երբեմն զինքը կը բաժնէին Եւրոպայէ : Բոլոնիոյ նախկին պետութեանն ուրիշ բան չէր մնացած , բայց եթէ Քրաքովիա , որ աղանապետական հանրապետութիւն մը եղած էր : Շուէտ , Ֆինլանտայէ ու Բուրգունիայէ զրկուելով , որանտինալեան նահանգին մէջ սահմանափակուած էր :

Եւրոպական հաւասարակշռութեան վերահաստատման հետ վերահաստատուած էին նաեւ նախորդ կառավարութիւնք : Այն երկիրներն ուր Ֆրանսական բանակներն արշաւած էին , իրենց երբեմնի տէրութուն վերադարձուցան և նախկին դրութիւնը վերահաստատուած էր : Եւրոպիոյ կառավարութեան ձևն եղած էր բացարձակ միապետութիւնը : Միակ սահմանադրական պետութիւնք էին Անգլիա , Ֆրանսա , Հոլանտա , Զուիցերլանտ հանրապետութիւնը , և ընդ Բայց հին ալ իրական իշխանութիւնը դարձեալ փոքրիկ աղանապետութեան մը ձեռքն էին : 1814 ին , Եւրոպական բոլոր երկիրներուն մէջ հաստատուած կառավարական դրութիւնը գծագրութեան տեղի տուած էր անոնց որք հանրապետական գաղափարներով տոգորուած էին : Վիեննայի մէջ ի գործ դրուած հոլային բաշխումը կատարուած էր առանց ի հաշիւ տանելու ազգերուն բազմաքանակը : Երեք ազգեր , Գերմանիա , Իտալիա և Բոլոնիա շատ մը ուրոյն պետութիւններու բաժնուած էին : Մինչեւ իսկ պետութիւն մը , Աւստրիա , քանի մը օտար ազգութիւններէ միայն արուեստական խումբ մը կազմած էր : Այս դրութիւն անդի կուտար ազգային կուսակցութիւններու կազմութեան , որք իբրեւ ընդդիմադիր , կ'աշխատէին եղծել դիւանագէտներուն գործը : Եւ որով-

հետեւ Եւրոպիոյ կառավարութիւնք կը ջանային պահպանել իզայն , ամէն երկիրներու մէջ ընդդիմադիրք փոխադարձ համերաշխութիւն մը կը զգային և կը ջանային համաձայնութեամբ գործել : Ուրիշ ամէն տէրութիւններէ աւելի , Աւստրիոյ կառավարութեան շահը կը պահանջէր իր ներքին կազմակերպութիւնը և Գերմանիոյ մէջ ունեցած ազդեցութիւնը վտանգող տարրներուն շարժումները զսպել , և հետեւապէս աւստրիական կառավարութեան պետը , Մէքլերնիխ , բնականաբար կը դառնար ընդդիմութեան պետը : Պահպանողական կառավարութեանց և ընդդիմադիր կուսակցութեանց միջև ուրեմն կ'սկսէր այն պայքարն որ 19րդ դարուն մէջ ժամանակակից Եւրոպիոյ քաղաքական պատմութիւնը կը կազմէ :

(Շարունակելի)

ԱՌՆԵՏՆ ՈՒ ԺԱՆՏԱՒԵՐ

Ինչպէս յաճախ կը գրուի , ժանտախտը Եւրոպայէ շատ հեռի չէ . ահաւոր ախտն երկու երեք տարիէ ի վեր արդարեւ կը քայլէ դէպի Արեւմուտք և Հիւսիս , և իր մնացուն վաւարանէն , Հնդկաստանէ , հասած է մինչեւ Բորնուկալ ուր տակաւին կը ճարակի : Եւրոպիոյ , մանաւանդ սահմանակից պետութեանց առողջապահական պաշտօնէութիւնք արշաւող չարիքին առջեւ թուր կանգնած են , զոր գծուարաւ պիտի տապալէ : Անհանդիստ չըլլանք , բայց առաջին և ծանր անխոհեմութիւնն է քնանալ չափազանց յուսատես ապահովութեամբ : Ծովային փոխադրութեանց և երկաթեայ ճամբաներու համար ամենախիստ հսկողութիւն հաստատուած է և կրկնակի առողջապահական չզթայ մը կը պաշտպանէ Եւրոպական ցամաքն ու իւրաքանչիւր երկրի սահմանադրութիւնները : Նոյն խիստ հսկողութիւնը նաեւ վարակուած դաւառներէ եկող վաճառքներուն եւ արտադրութեանց նկատմամբ : Բայց , ինչպէս կը հաւատան առողջաբանք , ժանտախտային միջոցներուն արագ փոխանցման ուրիշ միջ-

նորդ մ'ալ կայ որուն դէմ ամէն մարդ պէտք է զգոյշ ըլլայ : Այն է առնէտը , խորամանկ , ճղճիւր , չար և զգուշիւ առնէտը . առնէտը որ հազիւ երկու հարիւր տարի առաջ Հընդ-կատանէ ներածուելով , արշաւեց մեծ քաղաքները , որ զԲարիկ կ'ողողէ ամէն կողմ , եւ արեւին մարը մտածին ոյէս , յանդդնարար իր աշխոյժ ցոռէին ու որկրամիտ ակործակը կը պտտցնէ ամէնուրեք : Քանի մը տարիէ ի վեր առնէտը մասնագութիւն պատճառելու չափ չափցած է ի Բարիկ : Հիմա հարկ եղած է պաշտօնապէս զրադիլ այս արհամարհելի կրծողին հետ : Բարիկ քաղաքի առողջապահական պաշտօնէութիւնէն Տր. Հէնրի Թիէռի քննութիւն կատարեց , և ապացուցուց թէ անհրաժեշտ է ընդհանուր միջոցներ ձեռք առնել առնէտներուն դէմ : Տր. Թիէռի տեղեկագիրը , ըստ ամենայնի վաւերական և բազմաթիւ նկարագրական ծանօթութիւններով լի , ի մօտայ պիտի հրատարակուի մասնաւոր հրահանգներով եւ պատուէրներով , զորս բարիկարանի ժողովուրդն իմաստաբար ի գործ պիտի դնէ : Քննութեան արդիւնքը կը հաստատէ թէ այս վերջին տարիներուն մէջ Բարիկի կատարեալ կերպարանափոխութիւնը , հին թաղերուն քայքայումը , կոյուղիներու հաստատութիւնն ու ընդարձակումը , գետնափոր խշտիներուն տակնուվրայութիւնը բաւական պէտք էին ըլլալ հեռացնելու համար այս թշնամին , որ ինքզինքը ծածկելուն մէջ շատ ճարպիկ է : Բայց այսպէս եղած չէ : Առնէտն իրեն ապահով սպաստան բրաւ կոյուղին , ուր ողողումէն միայն կը վախնայ , եւ ահաղին մթերքներով մայրաքաղաքին սննդառութեան զագացումն ալ աւելի մեծ ճարակ սպառնովեց իրեն : 1900ի Արուեստահանդէսին համար Սէնի եզերքը վերջերս կատարուած աշխատութիւնքերեւան հանեցին առնէտներուն պատկառելի բազմութիւնը : Այս անախորժ հիւրեր դեռին եւ զերքն իրենց ապաստաններէն վախճուելով խմբովին տարածուեցան մերձակայ թաղերուն մէջ : Քարտիներուն չրջակայքը փողոցներ կան ուր նոր տուններն այն աստիճան վարակուած են անոնցմէ որ բնակիչք չեն համարձակիր իրիկունները տալայ դուրս ձգել բակին կամ պատէզին մէջ : Այս գարշելի ծնունդն ածած է նաեւ Շուկային մէջ : Հոն վաճառականք դառնապէս կը գանդատին . ի-

րիկուն եղածին պէս առնէտներու բանակ մը կը տիրէ շուկային , յարձակելով պահեստի վաճառքներուն վրայ , ճամբայ մը փորելով էն պնդակազմ որմնակերուն մէջէն , նոյն խիլ քայքայելով կազի եւ երկտրականութեան ուղիները : Ի Բարիկ Ֆուռնօ փողոցին սպանդանոցին քակման աստիճան , առնէտները թաղին վրայ յարձակեցան , հաւնոցները քանդեցին , քանի մը տեղեր ծանր վնասներ պատճառելով : Այս նկարագրութիւն չափազանցուած չէ , եւ այս մասնաւոր արշաւանքին վրայ — բարբարոսաց արշաւանքին պէս բան մը — Հանրի Թիէռիի տեղեկագիրը շատ աւելի հաստատական է այն իրական վաւերական համար զոր կրնայ պատճառել հանրային առողջապահութեան :

Բայց տեղեկագրին եզրակացութիւնը ի՞նչ են : Ի՞նչ դարման կ'առաջարկէ Հանրի Թիէռի . դեռ որոշ բան չկայ և ճակատամարտի յատակագիծը խմբագրուած չէ . մինչեւ հիմա ի՞նչ ըրած են առնէտներուն դէմ Բարիկցիները դեռ կրնան յիշել թէ ժամանակին մարդին կամ մթերանոցին մէջ դարմանի կը նստէր մարդ մը () առնէտ սպաննելու համար . այսօր կը խնդանք այսպիսի միջոցի մը վրայ : Հապա ո՞ր աստիճան պիտի խնդանք երբ ըստ թէ ժամանակին բախլայ թափողներ ալ կային որ կը կարծէին մասնաւոր գաղտնիքն ունենալ առնէտներն անհետացնելու , առանց անոնցմէ դակայն հատ մը սպաննելու : Կը մնան թոյնը , ծուղակը , կատուին թաթը կամ շունին աղաւան : Բայց ձգենք ս'ա կատուին աշխատակցութիւնը , թէ և կը խնդրենք որ ներողամիտ ըլլան մեր տուններուն այդ ձկուռ և շնորհ սլի բարեկամին հիւսղոյնները : Աւաղ , քաղաքարանի կատուն թուրցած է տաքուկ ընտկարաններու և սպանով խլաւի(լաբա) հեշտութեան պատճառաւ : Մուկին հետ դեռ կ'գոսանու , բայց անուշտ առնէտը քիչ մը վախ կ'ազգէ իրեն , որովհետեւ , շատ հազուադէպ բացառութեամբ միայն , կատուն անվահեր առնէտին առջեւ այլ ևս չի ցուցներ իր որսորդի և կուռղի բնազդունները : Բարիկի մեծ շուկային մէջ կատունները բազմաթիւ են , որովհետեւ շատ անեցիներ աւանդուէր և է օգուտ չտեսնելով , իրենց օձիքն անոնցմէ ազատած են , զանոնք շուկան նետելով : Արդ , մի' զարմանաք երբ լսէք թէ այս կատուններ առնէտներուն հետ չէնք չը-

նոր՝ տուն տեղ կը կազմեն, իրարու հետ կը համաձայնին, անոնց հետ ընկերանալով կրպակները կը կողովանեն և ամբողջ ղիշերն հոս ու հոն կը վազվզեն, իրենց միաբաններով ոգևորութիւն տարով այդ անասնական խութանին կերուխումին: Այս է պատճառն որ Ֆրանսայի կրեմլի ժողովոյ երևոտական յանձնաժողովն այս տարի ջնջեց պատերազմական միջոցներուն կատուներուն յատկացուած վարկերը: Իբրեւ պաշտօնական կատու պիտի կերակրուին միայն այսուհետեւ Ֆրանսայի երևոտական պաշտօնատան և Պետական Խորհրդոյ թոշակաւորները:

Առնէլին իբրեւ լուրջ թշնամի չնկատելով այսպէս կատուներ, տեսնենք թոյնն ինչ կ'արժէ: Առնէլ տալաններէ յարմարութիւն ունեցող հին մարդուն տեղ հիմա դրուած է վաւերական արհեստ մը որ տարրարանութեան անուան ներքեւ ձեռնարկած է առնէլտներուն ամբողջական կործանման: Ֆրանսական Տէրութենէն և Բարիկ քաղաքէն կախում ունեցող քանի մը հանրային հաստատութիւնք այս կերպով առնէլտներուն ձեռքէն պրծած են: Ընչպէս Ազգային Մատենադարանը (Ղալաթիոյ մեր Ազգային Մատենադարանը չհասկնա՞ք), Լիբրսենսարիկի սլաւաշ, Խընայողական Սնտուկի շէնքը, զպրոցները, և ընդհանրապէս թոյնը խիստ սաստիկ է, կ'ըսուի, և առնէլտը մոմայի կը վերածէ երբ սատկեցնէ: Եւ այս կերպով առաջը կ'առնուի անոնց զիականներուն փառումն առաջ եկած զարչանոտութեան, որովհետեւ յաճախ կը սատկին այնպիսի տեղեր, ուր դժուար է համարել և դուրս հանել զանոնք: Արդէն այս պատճառաւ է որ շատեր չեն ուզեր թոյնով սատկեցնել զանոնք, քանի որ կենդանին խկոյն չի մեռնիր իր կեցած տեղը: Եթէ ոչ ուրիշ միջոցներ ալ կ'ունի շատ պարզ, ընչպէս ճարտի մէջ եփուած սպունգի կտորուանքներ կտրուելու և ալիւրի խառն զնոտակներ:

Ծուղակն աւելի ապահով է, բայց անոր ալ տեսած զործը բաւական չէ. ծուղակ կայ որ քանի մը առնէլտով կը լեցուի, ծուղակ ալ կայ որ հաստ մը միայն կ'ապաննէ: Ասկէ զատ չարածճին դժուարահամ ախորժակ ունի. պէտք է չարուհակ խայծը փոփոխել:

Երկար ատենէ ի վեր զիտական խուզարկութիւններ կ'ըլլան՝ առնէլտներուն մարմին մէջ ներարկելու տեսակ մը յոյժ ազդեցիկ

թարախ որ ջնջէր զանոնք՝ ինչպէս երբեմն Աւստրալիոյ ճագարները: Բայց մինչեւ ցարդ գտնուածը փառնաւոր դարման մ'է միայն, որովհետեւ այս կերպով առնէլտներուն հազար դուած հիւանդութիւնը կրնայ փոխանցուիլ նաեւ ընտանի անասնոց եւ մինչեւ իսկ մարդուն:

Հանդի թիէռի կարծիքն այն է թէ չունը միայն կրնայ պատժել առնէլտը, եւ իրաւամբ առ այժմ այս է միակ դարմանը: Փոթոթները, որսի զանազան շուններն ամենէն յարմար միջոցներն են այդ անիծեալ ծնունդը վերջնելու համար: Քաղաքապետութեան տարրաբանական աշխատանքին սնորհէն ժողով չորս փոքրիկ շուններ ունի որք Բարիկի ոստիկանական պաշտօնատան շէնքերը զրաւող խուռնամբոյն առնէլտներուն խէրը անիծեցին: Առաւօտէն երեկոյ անոնց ետեւէն կ'իջնան, այնքան եռանդով որ նոյն իսկ անգամ մը մինչեւ Պէռսի գացեր են, ոստիկանական պաշտօնատունէն երկու քիլոմէտր հեռի կոյուղիներէն անոնց հետեւելով եւ իրենց ետեւը թողնով անիծելու անհամար դիտակներ: Ժողովէն պատուական շունը մէկ զարնելուն 650 կրամնոց առնէլտի մը մէջը կը կոտրէ:

Այսպիսի շուներու փոխակ մը պէտք է առնէլտներուն ծայրը բերելու համար: Զակեղեղ տնկուած արտերուն մէկ հէկտար հողին մէջ 10,000 առնէլտ կը համարուին:

ՏԵՍ. ԵՒ ԳՈՐԾ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՋՈՒԻ

Յօրինեց՝ ԲԻԻ.ԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Տարրական ընթացք. — 80 երեսէ բաղկացեալ. կը պարունակէ 51 ընթերցուած և 212 հրահանգ, մին քան զմիւսն չահեկան: Գին 2 դրու:

Միջին եւ բարձր. ընթացք. — 208 երեսէ բաղկացեալ. կը պարունակէ 50 ընթերցուած, լաւագոյն հեղինակներէ քաղուած և 200 հրահանգ: Գին 4 դրու:

Սոյն երկու Քերականութիւններն իրենց տեսակին մէջ լաւագոյններն են, և հետեւեալքէն ջերմապէս կը յանձնարարենք Հայերէնի ուսուցիչներուն ուշադրութեան:

Ազգ. վարժարաններու համար 25 դր. հաշիւը գեղջ:

ԳՐԱԿԱՆ ԷՋԵՐ

ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԵՆ

ԼԵՈՆ ԹՈԼՍՏՈՅ

Լէոն Եւքրոպայիւն Կոնսթանտին Թոլսթոյ, մեծա-
նուն ուսւ վիպասանը, 1828ին ծնած, կը
գրաւ է ութսնական թուականին վերջին կե-
սէն աւելին՝ ուսւ գրականութեան մէջ և իր
ծերութեան ատեն խի, գրելու խանգը դեռ
անսպառ կը շարունակուի իր մէջ, ինչպէս
տեսնուեցաւ իր մէկ քանի վերջին երկերէն:

«Գրելու խանգը» կ'ըսեմ, ու Մեքլիստ ար
Վօլէի հետ պէտք է խոստովանիմ թէ ան
ո՛չ ասորեցաւ գրելու համար ո՛չ ալ գրեց ասո-
րելու համար: Որովհետեւ ուշադրութեամբ
կը դիտէր իր շուք և ինքն իրեն մէջ, իր զի-
տած տեսարաններուն կորովի պատկերները
բնական կերպով ուրուագծած է թուշ-
թին վրայ, ինչպէս բժիշկ մը որ մարդակազ-
մութեան տախտակներ կը դծէ ո՛չ թէ զը-
ծելու համար, այլ աւելի տեղեկանալու մար-
դուն և անոր հիւանդութիւններուն վրայ:
Եւ մէն անգամ քր գրիչը ձեռք տուած է, լու-
սաբանելու համար է մեծ հարցումը իր աշ-
քերուն առջեւ, թէ ինչու՞ երջանիկ չէ, ին-
չու՞ ուրիշներ ալ երջանիկ չեն, և թէ ինչ
միջոց պէտք էր, որպէս զի անոնք աւելի
երջանիկ ըլլային: Իր սկսնակութիւնն այս
տիւր խորհրդածութիւններէն ներշնչուած
է առաջին անգամ իր երկատարութեան
խանդոտ օրէրուն, և ինքը յաւանութիւնը
ունեցած չէ նպատակ ունենալու միայն գը-
րելը, որովհետեւ գրելը երբ կ'ամբիւն չըլլայ,
այսինքն երբ նախապէս առանց փառքի՝ ե-
րեւելաւ ըզձանքին, մարդուն մէջ բնագո-
րէն չարժող ինքնամուգ հարկ մը ըլլայ միայն,
ամէնէն բնական բանն է:

Իր առաջին երկերէն որոնց մեծ մասը կով-
կասի մէջ գրած է, իր թի սլափորովին ատեն
ուր ինքն ալ իր զինուորի բաժինն ունեցած
է, կ'արելի է յիշել խաղալաները, զլուս-գոր-
ծոց մը բանաստեղծութեան և մեղամաղձոտ
փրկափայտութեան, ուր բնութիւնը ու Արե-

ւելքի նախահայրերը, զոր մինչեւ այն ատեն
նօմանքիք հեղինակներ իրենց երեւակայու-
թեամբ ճոխացուցած էին, առաջին անգամ
յոյց կը տրուին իրենց պարզութեան և ին-
կուլեան մէջ: Յետոյ «Մեկաստորոյի պաշար-
ման նկարները», այնքան հրաշալի որքան
ճշգրիտ, խորհրդածուած ատելութեամբ մը
իր դիւցազնաբար կատարած զինուորութեան
տիւր ու միանգամայն ազնիւ պաշտօնին
մասին: Իր «Մանկութեան յիշատակները»ն, որ
կատարեալ անկեղծութեամբ գրուած են և
որուն առաջին մէկ քանի գլուխները նախա-
պէս կեղծանուան մը քօղին տակ հրատարա-
կել տուած է հանդէսի մը մէջ:

Յուզուած, խիստ շարժուն, տատանող
կեանք մը ունեցած է, ուր ամէն երեւոյթներ
իրարու ետեւէ կուգան նորանոր իտրհուրդ-
ներ բանալով իր առջեւ:

Կանուխէն հրաժարած իր պաշտօնին,
երբեմնի սպան հետզհետէ իր անզը կ'ունե-
նայ Բեգերապուրկի պերճ ընկերութեան մէջ,
կը տեսնէ արքունիքը ու մարդիկը, կը ճամ-
բորդէ օտար երկիրներ, կ'անցնի ամէն բորձ
բարձրանքէ, ուր իր նմանները կը չոսյին
ուսւ գործունէութեան բոլոր աւիւնը, այն
ժամանակին՝ ուր այդ աւիւնը կը գործա-
դրուէր միայն հաճոյքի համար: Գինին, խա-
ղը, կինը, բոլոր գինավութիւնները կը վա-
յելէ: Երբ անդին ուրիշներ ալ, ինչպէս զըն-
չուհիներ, գիշերները ձիւնին վրայ իրենց
կրքոտ երգերը կը մուտան, ու կ'ուզեն թրմ-
բրիլ անրան լճացումով մը, խեղդելով տըք-
լին մէջ անտանելի խմացականութիւնը, «սոս-
րին գիտակցութիւնը սպրեւել», ինչպէս կ'ը-
սէ տակաւին Թոլսթոյ:

«Միացուցէք, կ'ըսէ Մեքլիստ ար Վօլէի»,
իր կեննքին բոլոր հակասութիւնները, եթէ
կրնաք, բացատրած ոլտի ըլլաք այն ատեն
իր հանձարը, հանձարը ժողովուրդի որուն
ներկայացուցիչ դէմքն է անիկա: Այդ հա-
կասութիւնները նոյն խի, իր գօրաւոր ան-
հատականութիւնը վերաւորելէ հետո, զայն
աւելի գուր կը հանեն, ինչպէս ամսերու
տակ ծածկուած գրողացող երկինքը՝ աւելի
գեղեցիկ կ'երեւայ քան իր քիչ մը առաջուան
ժպտուն արեւոտ վիճակին մէջ:

Տակաւին շատ թարմ, զիտող մ'սկսած է
ըլլալ, վճիտ գիտակցութեան մը մէջ սպրող
կանուխէն ուսումնասիրել իր ներքինը: Այս

առաջին զննողութիւնէն, դուրս կը հանէ իր անդութ ճառը, ինքնա-հոգեբանութեան (auto-psychologie) որ կը պարունակէ «Մանկութիւնը», «Պատանեկութիւնը», «Երիտասարդութիւնը», ծայրէ ի ծայր անկեղծ, անաչառ խոստովանանք մը իր յուզուած կեանքին,

Հետզհետէ երբ ա'լ կը շեշտուի իր անհատականութիւնը, մօտէն ուսումնասիրելով մարդիկն ու անոնց գործերը—որովհետեւ տիեզերական հանճար մ'է անիկա ուր գրէ թէ ամէն լեզուները յստակ կը խօսին իր բանականութեան— կը գրէ «Պատերազմ եւ խաղաղութիւն» անուն հանրածանօթ գործը, ահոր մէջ առնելով Ռուսիան ա'յն վարկեանին ուր ինքզինքին գիտակցութիւնը կունենար, այս դարուն սկիզբը, ցոյց տալով թէ ի՞նչ տարբերէ կը բաղկանար անիկա, դէպի որ իտէալին կ'ընթանար խարխափելով,— խընդիրներ որ կը փորձէին Թոլսթոյի փիլիսոփայական միտքը: Իր կերպարանիչ (plastique) հանճարը բնական կերպով ապրել կուտայ, կը թանձրացնէ այս վերացական (abstrait) դաղափարները միս եւ արիւն կրող յուզուած էակներու մէջ, յայտնողներ ամբողջ ընկերութեան մը՝ իրենց ամէն մէկ շարժումներով, խօսքերով. իր տեսութեան զօրութիւնը ցոյց կուտայ մեզ աւելի քան Բուսիա մը, մարդկութեան ամբողջ ընդարձակ մաս մը, գողունի զօրութիւններով եւ այն ընդհանուր շարժումներով որ զայն գործել կուտան ամէն երկրի, ամէն ժամանակի մէջ: Վէպ կամ դիւցազնիքութիւն, ինչպէս որ կ'ուզէք, «Պատերազմ եւ խաղաղութիւնը», ամէնէն ընդարձակ ու ամէնէն հաւատարիմ հայելին է զոր երբեք ներկայացուցած ըլլայ հեղինակը միգմէ իւրաքանչիւրին ճանչցնելու համար հոն իր նմաններն, ու ինքզինքը անոր մէջ դնելու համար:

(«Աննա Բառէնինը») որ այս գործէն վերջը կուգայ, կը բերէ ժամանակակից ընկերութիւնը դատաւոր Թոլսթոյի առջեւ: Այս երկու վէպերէն ուր ամփոփուած է բոլոր ռուս կեանքը, վերջինն առաջինէն նուազ դաղափարներ եւ նուազ իրողութիւններ կը պարունակէ, կը թափանցէ սրտի խոցերուն մէջ, կը նկարէ կիրքին խռովքը, ռուս գիտակցութեան փիլիսոփայական յուզումները, Ալեքսանդր Բ.ի ատեն:

Այս գործէն վերջ, երբ ամէն տեղ, ամէն

երկինքի տակ իր համբաւը շինուած է արդէն, Թոլսթոյ կը փոխուի, անդարձ հրաժեշտ մը կուտայ արուեստին, անէծքներ կը թքնէ անոր: Անկէ ի վեր որ քսան երկու տարի կ'ընէ*, գրիչը ձեռք կ'առնէ միայն կուտակելու համար իրարու վրայ իր ամբաստանագրերը արուեստին դէմ, քաղաքակրթութեան դէմ որուն մասը կը կազմէ ինքը, սիրոյ դէմ, պատերազմի, գիտութեան եւ հաստատուած եկեղեցիին դէմ: Աստուածաբանական եւ միանգամայն արմատական (théologie-rationaliste) ճառերը հետզհետէ իրարու կը յաջորդեն անխոնջ. «Իմ խոստովանանքս», «Իմ կրօնքս», «Մեկնութիւններ (commentaires) Աւետարանին վրայ»: Յետոյ յաճախակի լուսարանութիւններ կուտայ իր վարդապետութեան, աւելի յստակ, կարճ առակներով (parabole), ժողովրդային բարոյական պատմութիւններ: Այս պատմութիւններէն մէկ քանինքը գլուխգործոցներ են նոր սեռի մը, ինչպէս «Տէր եւ ծառայ», «Խնչով կ'ապրին մարդիկ», կամ ինչպէս այս յուզիչ տոսմը, «Խաւարներուն զօրութիւնը»:

Մեծ իրապաշտին բնագդական մէթոտը կը յաղթանակէ ու կը նուաճէ մեզ իր քեզերուն ամբողջութեամբ, երբ մանաւանդ քողամերկ կը յայտնէ սիրոյ ոճիրները «Սօնաթ ա Բուէօ-ձեռ»ին մէջ, արուեստին charlatanismeը իր վերջին քանդիչ մէկ գործին մէջ, «Ի՞նչ է Արուեստը» վերնագրով: Մէթոտ մը անա'ռ ռուս նպատակն է մերկացնել իրական դէպքերը իրենց աւանդական չաղակրատութենէն, եւ ցոյց տալ այդ իրողութիւններն իրենց պարզ, մերկ ու ողջ վիճակին մէջ: Այս ուղղակի տեսութիւնն անբաղդատելի ուժ մը կը հաղորդէ մեր քանդիչին (démolisseur) քննադատական prémissesներուն: Ակներեութեան (évidence) միայն կ'ապաստանինք, կը խոստովանինք, այո', իրեն հետ այն խեղճ սնոտի բանը զոր կը գտնենք առ հասարակ բոլոր երեւոյթներուն տակ: Բայց կեանքին մէկ ընազդէն եւ պարապին սոսկումէն, կ'ստիպուինք խոյս տալ ա'յն հետեւութիւններէն որ մեզ յանգիլ կուտան դէպի տարօրինակը, դէպի ուշիւնը:

(*) «Աննա Բառէնինը» սկսած է 1865ին, եւ երկար ընդհատումներէ յետոյ, ամբողջովին հրատարակած է 1877ին:

Թուրքիայի մօտ, իր Եսադնայի Բոլիանայի բնակարանին մէջ քաշուած, «վերածնած», եթէ կրնամ այսպէս ըսել, իր մութիկի քաճ-քաճին տակ, կնճռոտ առաքեալ մը պարզ կեանքին, հազիւ քանի մը ժամեր կը վատէ իր բազմաթիւ դործերուն: Ամէն ոք գիտէ թէ Թուրքոյ ձեռնական աշխատութիւններու ալ հետամտած է ու զրելու չափ ալ սիրած է զանոնք. հողագործութիւնը, խորճաշինու-թիւնը իր Եսադնայի Բոլիանայի ապաստա-նարանին մէջ մանաւանդ զինքն զրադեցու-ցած են, և երկիւղն ունի մարդ հաւատա-ու թէ այդ զրադումները չկրցան այնքան յաճախորդ հրաւիրել որքան ինքը ընթերցող-ներ ունեցած է իր վէպերուն համար: Իր ա-պաստանարանին դրացի զիւղացիներն ար-դէն տխուր մէկ ակնարկութիւնը ըրած են այս բանին, մեղմորէն խմացնելով անոր թէ իրենք կը նախընտրեն արհեստաւոր հովիւը, այսինքն լոկ հովիւը կամ լոկ հողագործը, և այն ատեն աշխատող եզները աւելի լաւ կը խնամուին:

Հակառակ իր կեանքի խորխորտաններուն, զաղափարի տեսակէտով հակասութիւններ մի' փնտռէք բնաւ. իր բոլոր գործերը ծայրէ ծայր կը պահեն, այո', զաղափարի միու-թիւն մը, ինչ որ կ'ապացուցանէ իր անհա-տականութեան դորութիւնը: Իր խոհալը տարբեր է: «Բաջաուղջ տղայ մը, կ'ըսէ իր մանկավարժական խիստ հին յօդուածներուն մէկ հաւաքածոյին մէջ, աւելի մօտ է... ոչ-խորհող արարածներուն, անասունին, տուն-կին, բնութեան, որ է յաւիտենական տի-պարը ճշմարտութեան, գեղեցկութեան և բարութեան» Ահա՛ խոհալ մը որ յառաջդի-մութեան տեսակէտով, փոխանակ յառաջ մը-ղելու, դէպի ետ կը նետէ իր ակնարկը, միշտ աւելի ետ, ամենէն նախնական պարզ բաներուն ուր եսին զիտակցութիւնը մին-չեւ նիւթին մէջ կ'ուզէ մխրճիլ ձուլուի, յաւիտենական անդիտութեան մէջ որ է ճրչ-մարիտ երջանկութիւնը: Եւ արդէն իւր «Խա-զակներ»ունմէջ նախնական երիտասարդ դիւ-ցազնը, Ուլմին, կը տենջայ իր քաղաքակրթ-եալ մարդու հոգին մերկացնել մօտենալու համար փոքրիկ ասիացի Մաւրանին որ աւելի երջանիկ է ու աւելի մօտ բնութեան: «Պատե-րազմ և Խաղաղութիւն»ին մէջ խեղճ գիւղացի մը ոչ նուազ սկար խնայականութեամբ հա-զիւ կարող խորհելու, Բլաթն Բառաթայիէֆ,

մէկ քանի միամիտ խօսքերով բարոյական խուրմութիւն մը կը հանէ՝ ուրկէ Պէզուչօֆ կոմսը, թէեւ այնքան հանճարեղ ու խառ-տուն, նուաստացած դուրս կ'ելլէ ու լու-սաբանուած միանգամայն: Նոյնպէս, «Աննա Քառէնին»ին մէջ, աւելի ճոխ մանրամասնու-թիւններով ցոյց տալով զրքին բարձրակէտը, Լէվինի տանջուած բանականութիւնը կը փրկուի վերջապէս Ֆէտու մութիկին օրինակ-ներէն ու խրատներէն ազդուելով, պարզ կեանքին հետեւելով, հրաժարելով իր քաղա-քացիի մեծ զիրքէն:

Թուրքոյի երեւակայութեան բոլոր զաւակ-ները միեւնոյն տենչերն ունեցած են, ամենքն ալ զինքը ձեռնամուխ ըրած են դէպի այն շաւ-ղին մէջ ուր ինքը հետեւեցու անոնց քիչ ա-տենէն, Սիւթայիէֆի դուրոցին մէջ, Թովէրի այն հեղ, մեղմարարոյ աղանդաւորին՝ ուրուն պատմութիւնը ըրած է արդէն նոյն ինքն Մեքիօն սը Վօկիւէ հմուտ գրագէտը:

Իր բոլոր ներկայացուցած գիւցաղները սա-ընդհանուր տնդութ հետեւութիւնը կը հանեն թէ քիչ պէտք է գիտնալ, քիչ խորհիլ, Աս-տուծոյ թագաւորութիւնը փնտռել երկրի վը-րայ, առանց բարձրին, հեռուն մտաւան-ջութեանը, փնտռել, այո', ջնջումը պատե-րազմներու, մեղկացուցիչ ճարտարարուեստ-ներու, գիւղական կեանքին դաւնալ:

Բոլոր հրաշալի ձիրքերովը, ցնորական տենչերովը, իր ժխտումի տարօրինակ ծու-րայեղութիւններովը, Թուրքոյ միշտ կը մնայ իբր մեծ, կորովի, վառ հանճարի տէր մարդ մը որ առաջին անգամ ցոյց տուած է մեղ իր ցեղին բովանդակ հոգին: Իրմէ առաջ կու-կոյ, կոնդարօֆ, Թուրկէնէֆ, Գոսպոյիէվս-քի արդէն նկարագրած պարզած էին Ռու-սիոյ մէկ քանի տեսարանները, առանց իր ամբողջութեանը, և ատիկա ալ նոյն իսկ օ-տար գրականութիւններէ — մասնաւորապէս Ֆրանսականէն և ոչ նուազ նաև գերմանա-կանէն — կրուած ազդեցութիւններու տակ, իսկ Թուրքոյ իսկ Ռուս մըն է մինչև իր ար-եան միջին կաթիլը, առանց տարբեր խառ-նուածքի մը, ամէն բան տեսած է իր երկ-րէն ու ամէն բան ըսած:

Իր վերջին գործերէն մանաւանդ «Յարու-թիւնը» մեծ արձույտանք գտած է արդէն բո-վանդակ գրականութեան մէջ, իր «Պատե-րազմ և Խաղաղութիւն»ին չափ, իր ամէնէն կորովի տեսականութիւնը թափած անոր մէջ, մարդը ներշնչումներով:

Ե. Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անգլիոյ կացութիւնը Եւրոպայի եւ Ամերիկայի հանդէպ. — Անոր մեկուսացումը. — Զինուորական կացութիւնը. — Միջազգային կացութիւնը:

Պատերազմէն առաջ ի՞նչ զեղեցիկ փոխանակութիւն քաղաքավարական բացատրութեանց Ատլանտեանի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Անգլիական եւ ամերիկեան մամուլները կարծես իրարու դէմ մրցում պատրաստած էին երկու անգլիկաաքսոն ազգակիցներն իրարու մօտեցնելու, ազգակցական կապերն յիշեցնելու, զօրացնելու նպատակաւ: Թնդանօթը զուռաց, եւ ահա՛ տարբերութիւններն երեւան ելան երկու պետութեանց, մոնպաւնդ թէ երկու ազգերուն միջեւ: Ամերիկացիք անգլիացւոյ պաշարները չունին, թէն ծագումը եւ արւելեան Անգլիացի են. մայրենի արմատէն այլասերած ժողովուրդ մ'եղած են Ամերիկացիք, յատուկ բարբերով, առանձին սովորութիւններով եւ ուրոյն խառնուածով: Եթէ փափաքին անգամ մը դարպաս ընել իրարու, այն ատեն միայն երեւան կուգան կարգ մը հասարակ տեղիք փոխադարձ գովաստի, «եղբարք եմք մեք» ի անուշիկ խօսքեր: Բայց Անգլիոյ իրական վտանգին առջեւ, այն պահուն երբ Անգլիա իրաւամբ կ'սպասէ իր յանկոյտ-առանտեան ազգակիցներէն բարեացակամ չեզոքութիւն մը, ամէնէն աւելի իայթուած կ'զգայ այսօր ինքզինքն ամերիկեան մամուլէն կողմէ: Նիւ Եօքքի, Պոսթընի, Ֆրատեւիֆիոյ, Շիքսպիի պէս ընդարձակ եւ կարեւոր կեդրոնք յայտնապէս կը համակրին Պօէրներուն, հըրապարակաւ կը քուէարկեն աղօթել առ Աստուած պօէրական զինուոյ յաջողութեան համար: Անգլիական թերթերը, անշուշտ զխոմամբ խաբուելով չտեսնելու կը զարնէին ամերիկեան հասարակաց համակրութիւնը՝ ուղղեալ իրենց թշնամիին. կը յայտարարէին թէ հայրենիքին վտանգին պահուն, երբ Մանչէն անդին անմիջական դրացիք թմուկ կը զարնէին, Ատլանտեանի անդիի կողմը արեւակից եղբայրներ իրենց համակրութեամբ կը քաջալերէին զիրենք: Բայց ինչ

համակրութիւն, չըսէ՞ք հակակրութիւն: Հետաքրքիրներ ամերիկեան մամուլն վիճակաւորը պատրաստեցին ներկայ պատերազմին առթիւ՝ չարիչու համար անոր կարծիքը պատերազմին նկատմամբ, եւ հետեւցուցին իրաւամբ թէ ամերիկեան մեծ ու փոքր օրութերթեր Պօէրներուն դատին կողմը կը հակէին ծանրապէս: Իրաւ է որ միջազգային իրաւանց տեսակէտով պետութիւնք, որք անմիջական չա՞ մը չունին, պէտք է պաշտօնապէս չեզոքութիւն հրատարակեն, ինչպէս ու հրատարակեցին: Բայց Այանհամերիկեան պատերազմին մէջ անգլիական մամուլն բռնած ընթացքը նկատի առնելով, անհզին տարբերութիւն կը տեսնենք երկու ազգաց իրարու հանդէպ բռնած դիրքին մէջ, Քուպայի եւ Թրանսվալիան պատերազմներուն առթիւ: Եթէ Ամերիկացիք յոռի վարչութենէ մը զՔուպա ազատելու համար կոուեցան, եւ մարդասիրական շարժառիթը կը դրդէր անգլիական մամուլը համակիր ըլլալ Դանքինբըրուն, դարձեալ յոռի վարչութենէ մը օտարահոգատակներն ազատելու շարժառիթը մէջ կը բերէ Մեծն Բրիտանիա՝ ներկայ պատերազմին արդարացնելու համար յաջա Եւրոպայի: Բայց Ամերիկացիք Պօէրներուն աւելի համակրութիւն ցոյց տալով, յայտարարած կ'ըլլան թէ չեն ընդունիր բնաւ Քուպայի եւ Թրանսվալիա զուգակշիռը: Այն ատեն ինչպիսիք կը փոխուի, ու Անգլիոյ իրական թշնամիք իր կարծեցեալ բարեկամներէն աւելի իրաւունք կ'ունենան դատաւարտելու: Զէ մ'պրկէնի քաղաքականութիւնը:

Նրեք տարիէ ի վեր երկրորդ նպատաւոր առիթն է այս որ միջազգային խնդիրներու մէջ հզօր ազդեցութեամբ կը թնդացնէ ամերիկեան կարծիքը: Ասկէց առաջ, այսինքն մէկ դարու պատմութեան մէջ, գրեթէ առ ոչինչ կը համարուէին ամերիկեան կարծիքները միջազգային աշխարհավարութեան տեսակէտով, այլ հիմա եւրոպական Մեծ Տէրութիւնք ո՛չ միայն պարտաւոր են լսել ձայն մը՝ որ կը դուռայ Ապաւնտեմեն անդին, այլեւ կանաչ գրասեղանին վրայ չեն կրնար հանել միջազգային տիտղոսով խնդիր մը, առանց չօշտիելու նախապէս Ռաշինիդընի Սպետակ Տան տանուտէրին կարծիքը: Ահա այս դիրքը զօրացնելու ուղղակի պատճառ մը տուաւ նաեւ ներկայ պատերազմը: Քուպա տեղիք,

Թրանսվալ կազմաւորեց Միացեալ Նահանգաց նորոտացիի քաղաքական դիրքը: Ըստ երեւութիւն, չըմբռնուիր կարծես դիւրաւ այս կէտ, բայց խորհելէ վերջ դիւրին է ըմբռնել: Եւ եթէ վաղն երկիրը տարբեր կերպարանք մը առնելով միջնորդութեան փառափարին պառկի Անգլիա, յոյժ հաւանականաբար Եանքի պետութեանէն պիտի ըլլայ այդ միջադրային բարեկամութեան ցոյցը, և Մաքինլիի ձայնը պիտի հնչուի պահ մը բոլոր քաղաքական աշխարհի մէջ, երբ ըսէ. — «Ա՛յ բաւական է իւրաքանչիւրն իր տեղը:»

* * *

Վերջին երկու շաբթուան մէջ անուկնկալ փոփոխութիւն կրեց Թրանսվալեան պատեւրազմն Անգլիոյ համար: Սըր Բըտլըրզ Պուլլըր ինկաւ, և իրեն յաջորդեց Աֆրանտտանի և Հնդկաստանի պատերազմներուն մէջ նշանաւոր եղող Իրլանտացի Լորտ Բոպէրց օվ Բանտահար, որոյ Սպայակոյտի պետն է Սուտանեան պատերազմին հերոսը, Լորտ Քիչնէր օվ Խարթուօ: Պատերազմի զաշտերն հիմա լեցուն են Լորտերով, Սըրերով, անգլիական ազնուապետութեան բոլոր ծաղիկը գացած է բուրել հոն, Օրանժի և Թրանսվալի ապաւեր վայրերուն մէջ ու ձորերուն խորամէջերը: Վեց օրէն ի ֆէրթաուն պիտի ժամանեն անգլ. բանակին նորընտիր հրամատարք բազմաթիւ զօրքերով: Պատեւրազմին վայրերը գտնուող, արդէն իսկ ճամբայ ելնող և ահա քանի մը օրէն ճամբայ ելնող զօրքերն ալ հաշուելով, Մեծն Բրիտանիա հարիւր յիսուն հազար մարդիկ ունի ոտքի վրայ, սպառազէն, անօրինակ բան մը անգլիական պատմութեան վերջին տարեգրութեանց մէջ:

Վերջին կացութիւնը կրնանք համառօտել հետեւեալ կերպով: Սըր Բըտլըրզ Պուլլըր չկրցաւ Դուկէշայէն տնցնիլ Դեկտ. 15 ին, և հիմա կ'ստատէ ի Զիլլի իր փոխադրութեան միջոցներն ու թնդանօթները վերակազմելու: Սըր Ջօրճ Հուայդն ազատելու համար երկրորդ փորձ մը ընելէ առաջ, Բարեյուսոյ գաղութին մէջ Մօտտըր-Տիվըրի ամփերուն վրայ Լորտ Միթուէն պաշարուած է հզօրապէս ամրացած Պօէրներէ, որոց մէկ ծայրը մինչեւ Քիմպրիի ճակատը կը գտնուի: Իրմէ քիչ մ'աւելի վար, զօր. Ալդէքրի աւելի տկար գունդը շատ դէժ պարտու-

թիւն մը կրած ըլլալով, չի կրնար նոյն իսկ գլուխ ելնել Բարեյուսոյ հիւսիսային դաւառներուն սպառտմբ: Հոլանտացիներուն հետ: Այսպիսի ձախող կացութիւն մը լուսաբանելու համար ահա՛ անգլ. կառավարութիւնը փութաց նորանոր կարգադրութիւններ ընել իր բանակին վերակազմութեան և հրամատարութեան մէջ: Պարագայք այնքան ծանր են որ այժմէն իսկ կարելի չէ անմիջական յոյս մը դնել Լորտ Ռոպէրցի և Լորտ Քիչնէրի վրայ, քանի որ իրենց յամառ թշնամին, զոր Անգլիա կը յուսար յաղթահարել պատժական արշաւամբով մը, 25—30,000 հոգեով, պիտի չուգէ բնաւ բաց դաշտի վրայ ելնել Սուտանի Տէրվիշներուն պէս, և ի բախտն ապաստան՝ նիզակ բեկուռնել անգլիական քաջամարդիկ զինուորին: Բան հետ: Անիկա իր բլրակներէն, տարերէն, խրամներէն պիտի չքաժնուի: Միշտ յրտեմներ պիտի ունենայ անգլ. բանակին մէջ, որ հրամատարներուն գիշերային խորհուրդները մինչեւ առաւօտ իր ականջը ձգեն: Ահա կը տեսնուի որ վտանգներ ու զոհաւորութիւնք միայն արտաքին չեն՝ այլ նաեւ ներքին:

Սպասենք անգլեթրանսվալեան պատեւրազմին երկրորդ արարուածին, որոյ վարագոյրը պիտի վերցնեն Լորտ Ռոպէրց և Լորտ Քիչնէր:

Դ Ր Ո Ւ Ա Փ Ն Ե Ր

ԵՂԱՍԵՒՆ

Դեռ նո՛ր դուրս հանուած է խցիկէն մարմինը մատղաշ աղջկան, իր քնքուշ գլուխին փոսութիւնը կը կրէ դեռ սնարը:

Շիշեր ու տուփեր լիփեցուն եռասանիկ մը վրայ:

Կը խորհիմ խեղճ մեռնողին վրայ որ օրերով կուշ տուաւ սուտ սուտ դեղերն իր ճշմարիտ Ցաւին:

Այդ չիշերն ու տուփերն իրենց կէս մը պակասած պարունակով կը թուին երեւալ հիմայ աչքիս Հայհոյանքին մարմնացումը՝ տոքթորին սնամէջ գիտութեանը գէժ. . .

* * *

Յաւախեա՛ն :

Ո՛րչափ չատ պատահած եմ Գեղի , ստա-
խոս բռն , աշխարհիկ կեանքի մէջ՝ երբ սի-
րոյ շուրջը դառնայ խնդիրը , ու Ս. Գիրքին
ալ մէջ , երբ «Հանդերձեալ կեանքին» խօսքը
կ'ըլլայ :

* *

Հոգին ալ ստամոքսին պէս է , չափազան-
ցութիւններու չի տակար : — Երբոր ատենք ,
սէր փոխել մը չէ՞ տափկա :

* *

Գիշերանց տուն կը դառնամ պլլլուն մի-
ամիտ լսատերիս հետ : Հին խանի մը առջեւ
կանդ կ'առնում՝ լսելով խրախճանքի սարսափ
աղմուկ մը որ կը խրժայ լսուտի (հալլած) մը
կրպակէն : Փակ փեղկերուն ծերպերէն կ'ե-
րեւակայեմ տեսնել զարիւղ լագերը , որոնք
ջութակի մը ջըլտա աղբաղկեքով կը դառ-
նան իրենց խօլ չըջաղարը տոհմային :

Յանկարծ կ'սթափիմ ջուրի կայլակէ մը որ
քիթիս կ'իջնէ ուղղակի : Պատն ի վեր նայե-
լով , կ'զգամ ականջներուս խարուած ըլլալը ,
նշմարելով պատուած լոյն խողովակ մը որուն
մէջէն հալող ձիւնը նազանքով կը կաթկթէր
անընդհատ և ուսկից կը չինուէր այս ձգձգ-
ուած խառնակ երաժշտութիւնը թիթեղա-
ձայն :

Օ՛հ , սա ձիւնհալը , որ հինուսին տա-
նիքներու ու զիւղակ խողովակներու մէջ դո-
ղունի ծալտելով ու խալըիկնալով՝ հէգ պան-
դուխտներու ուրախութիւնն ալ կը միմոէ
սա եղանակին :

* *

Մոռացումը մարդուն երկրորդ մահացցւմն
է որ փոսին պեղումին հետ կ'սկսի ու անոր
լեցուելովը ա՛լ կը յարառէ :

* *

Սրբանայտը :

Մանչուն կ'ապսպրեմ գարեջուր մը ինէ
թիգ մը անդին նստող անուշիկ կնոջ մը որ
գերմանիկ մ'է ապահովապէս : Պիրաո ետ
կուգայ : Համիէ՞ , ինչո՞ւ ուրեմն քառորդէ մը
ի վեր ինծի խրկէր իր է՛ն աղու , է՛ն զգլխիչ
ու մանաւանդ կողմնակիօրէն մեղոյ՝ նայ-
ուածքները :

— Մի՛ հոգ ըներ , ըստե կառնօնը , նեղուիլս
տեսնելով , կ'ինը չիլ է , խաբուեր ես :

Այդ օրէն այսօր քերականօրէն հաւաղ-
ուած եմ որ զլացում կոչուած զգացումը շիւի
շուրդն ունի իր մէջ անդատմառ :

* *

Քացախ :

Ու մտածել թէ քառաթեւ խաչեալին հը-
րանցուելէն յետոյ , դարաւերջի կենցաղագի-
տութիւնը զայն ակորժակ բանալու ծա-
ռայեցուց . . . :

* *

Մեր երկուքին Արշալոյսը ան տունին մէ՛ջն
էր ցաթեր :

Տո՛ւն որ տեսաւ նաեւ Միջօրէն անոր
կեանքին . — Անիկա ամուսնացաւ : Միջօրէ մը
ա՛յնչափ ճաճանչայորդ որ ըրերս խանձեց ու
վիշտիս կաթիլները ցամքեցուց :

Օր մ'ալ էրեցաւ սառ տունը : — Վերջա-
լոյսն էր ասիկա հրաւսւ , բոցակէղ վերջա-
լոյսն որ ինքն իր մէջ խմեց հատցուց ինչ բան
որ կը մնար մանկութեանս սուրբ օրերէն :

. . . Անէծքս ետ առի , Աստուածս՝ դեռ
կանուիս է . փրկէ՛ զինքն իր Գիշերէն :

* *

Փոխ :

Դրամիդ անդառնալի աքսորը յաճախ :

* *

Լուսամուտին առջեւ են երկուքը , նշու-
նած :

Այլը երթալով կը ճերմկի՝ դէմի բլուրնե-
րուն արտեւանք , ու մութ վարագոյրներէն
երախայ լոյսը կը վարանի ներս գալու :

Աւելի՛ շշուկ ունի թռչուններու զար-
թօնքը , քան թէ ասոնց մեղմ փափսուքը :

Տարէց կին մը ներս կը մտնէ , վարանոս ,
դէմքը չորցնելու զրազած :

— Ինչ է ատ առտուն կանուիս քըսքըսը
(երկուքը մէկանց) . — Աաղօթէինք կոր :
Ո՛ւր է ժամերնիդ :

— Նա՛ . . , նա՛ . . (փոխն ի փոխ մատեր-
նին կուրծքերնուն դարձուցած) :

. . . Սիրտն է սիրոյ մատուռը , ու սէրը
անոր դերագոյն աղօթքը աշխարհաբար :

Անոր խօսքերը չարականի մէջ չէ՛ որ կը
նռերադործ ունի , հապա հողիներու կուսու-
թեանը մէջ :

Աէրը Շնորհալիին չինածներէն աւելի ջնոր-
հալի տողեր ու սաղեր ունի՝ բոցաշուրթն բի-
րաններու մէջ թրթռուն :

Աէլը աղօթքներու է՛ն կամաց զուրցուածն
է , բայց է՛ն ալ հզօրը :

Հոգիին ճնշառութիւնը կայ անոր մէջ ու
սրտին ալ խաղը որ արեւդերքները կրնայ
դղդղել :

Զգացումներու ճերմակ ցո՛ւնցը կայ հոն ,
ու Շինողին ալ փառաբանութիւնը խորին :

* *

— Կեանք :

Միտք մը գործօն , սիրտ մը սիրող . — Տի-
եզերք մը չի՞ փթթիր այս բառին մէջ :

— Մահ :

Կանգուն մը գետին , երկու թի հող . —
Անմահութիւն մը չի՞ թաղուիր հոս :

* * *

Պիտի՞ . . .

Այն որոտող հարցաւանը չէ՞ տակա որ
ստէպ կողայ մեր ողորմուկ միտքը մըրկել ,
և , տխորթակնիս սրելէն , տենցերնիս շարու-
նակ մարտկելն վերջը , ախտն , մեզի յա-
ճախ ազարդիւն կը հասցունէ իր պատրու
ազառնիկն ներկայի մը՝ որ ահամայ կ'անդ-
րադառնանք Շէքսպիրի ջլատող To be, or not
to beին :

* * *

Մուսուխ է չորս զիս : Խարխալելով կը
քալեմ տեղէ մը որ պարտէզի կը նմանի : Աշ-
քերս կը խրխի մուխէն : Գիշերին մէջ դժոխ-
քին սուր կայ կարծես :

Ամէն քայլիս կը վարնուիմ ծառի բունի
մը , կամ մարմար քարի մը որ մահուան պաղը
կը ներարկեն ծունդերուս :

Պակուցումէն շնչահեղձ՝ վար կը զլորտիր
ու գիտիի մը պէս կը մնամ անյարիր :

Հողը կակուղ է հոս և ուռած :

« . . . Կեանքը ապրած էի որ ինծի հոս
բերին . ո՞ւր է հանդերձեալի կեանքդ , Աստ-
ուած իմ , ո՞ւր է . . . »

Այս բողբոյ ձայնը որ թարմ դադաղէ
մը կողայ աղանջիս կը թօթուէ զիս ուժով
ու կ'արթննամ :

Ըսէ՛ ինծի , ի՞նչ կ'ըլլայ , երա՞զ էր լսածս
թէ իրականութիւն :

ԹԱՂՈՒԻՒԿ

Իսկիւտար

ՓՈՒՆՋ ԳԵՐՄ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՅ

Չօնեալ առ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՈԳԵԱՅ ԱՐՔԱՅՆ

(ERLKÖNIG)

Ո՞վ անազան ձիաւարէ հովին մուխին :
Մի հայր է նա , և հետն ունի իրեն որդին ,
Մատաղ մանուկ , զոր բազկին մէջ պինդ կը
զրկէ ,
Խնամով , ըզգոյշ , որ զերծ սլահէ ցուրտէ ,
վառնդէ :

« Որդեակ , ինչո՞ւ տարեկամ դէմքդ ծած-
կեալ »

« Օգտավարիկ ոգեաց արքայն , հայր , չը
տեսնե՞ս ,

Թագը գլխին ու սրչաւոր ոգեաց արքայն » —

« Չէ՛ , որդեակ , չէ՛ , մատախուղի երկդ մ'է
այն » —

« Սիրուն մանուկ , եկո՛ւր ինձ հետ , եկո՛ւր
երթանք .

Քեզ հետ աղուոր , դարմանազան խաղե՛ր
խաղա՛նք .

Առուակին եզրն անթիւ ծաղկունք դոյն դոյն
չողան .

Ունի մայրըս ոսկեճամուկ շա՛տ պատմու-
ճան » —

« Հայր իմ , հայր իմ , չե՞ս դու լրտեր թէ
մեզմոճայն »

Ի՛նչ խոստումներ կ'ընէ ինծի ոգեաց արքայն »

« Մի՛ խնայիր , հանդի՛ստ եղիր , որդեա՛կ
սիրուն ,

Գոս տերեւոց մէջ խարշտին է դա հովերուն »

« Կ'ուզե՞ս ինձ հետ , կ'ուզե՞ս գալ դու , աղ-
ուոր աղայ .

Իմ աղջիկներ քեզ կ'սպասեն արգաներկուայ .

Գիշերախառն իմ աղջիկներ պար կը բռնեն ,
Երգով , պարով , մինչեւ նիրհես , քեզ կ'
բօրեն »

« Հայր իմ , հայր իմ , չե՞ս տեսնու
մութ տեղն , հեռու »

Ոգեաց պետին աղջիկները արքայազունն »

« Որդեա՛կըդ իմ , որդեա՛կըդ իմ , տեսնեմ մե-
կի՞ն ,

Ծեր ուռենիքն են որ այնպէս դուրս կ'երեւին »

« Քեզ կը սիրեմ , ինձ հաճելի՛ դէմքդ աղուոր .
Թէ չես յօժար , քեզ կը լինիմ ես բըռնաւոր »

« Հայր իմ , հայր իմ , բռնե՛ց զիս այն , բըռ-
նեց զիս այն .

Յաւեցո՛ւց զիս , վիրաւորե՛ց ոգեաց արքայն »

Կը ստակայ հայրն , ու կ'երազէ ձիուն ընթաց ,
Խարսըռահեճ որդին թեւոց մէջ պինդ գրկած .
Ագարակը հասնի շտապ տաղնապաղին .
Իր բազկայ մէջ աւանդած էր մանուկն հողին :

ԿԷՑԹԷ

Ռ. Յ. Պ.

— o o o o o o o o o —

ՍԻՐՈՅ ԻՏԷԱԼԸ

ՀԱՅՐԵՐՆ ԿԱՄ ԵՊԵՍՈՒԼԵՆ

Ա

Տունը՝ տաճար, ինքն անդ չնիկ չքնաղի դէմք հրեշտակունին .
 Ծնկերն ամէն ծո՛ւնի իր առջին, իրեն խորան՝ բոլոր սրտեր ,
 Իւր ոտանիկ բառաեռանց մէջ՝ բամբիջն աղւոր ու փափկասուն ,
 Պատշգամի հորիզոնէն դէմքն արեւելք գեռ նոր ցաթեր :
 Աչքերն՝ երկինք , սէրն հոն իր հուր դեռ նոր վառեր արեգակունք ,
 Իւր լուսալիճ բիրք արփենի՝ քայլամուտ ճամբորդ կեանքիս ,
 Գիշերներու ձեզուն ամպէն կախուած պայծառ կանթեղ լուսին .
 Վառ նայուածքին ճաճանշները Քերորի թեւ՝ հրեշտակ հոգւոյս ,
 Մարմին կաւէն թռչիմ յաստեր . թափիմ ծո՛ւնիլը Սէր-Աստուածին ,
 Կաթիմ՝ անտի սփոփանքի չիթ ու ժպիտ՝ արցունքիս մէջ ,
 Ու տխրանքին լեզեաւ լեցուն բաժակին մէջ՝ մեղրի՝ կոյտիկ ,
 Հոսիմ՝ կորով՝ խոնջ կողերուս , լո՛յսն՝ յոյսերուս խաւարին մէջ :
 Մէջ թառամած փափաքներուս ցօղիմ ցոլ թռչ , մաղուն՝ մուշկ բոյր ,
 Պողպատեայ ջիւղ կ'իջնեմ լարուիլ ամբած սրտիս լիճ աղեղին .
 Կ'իջնեմ՝ Սերուր նոր բոցսթեւ մոռացօնքի դամբանիս շուրջ ,
 Վիմափորիս պահակները դեմնէ գետին տախտակաբաժ ,
 Պատեմ՝ պատանքս անշքութեան ու յարութիւնն ճառագայթեմ ,
 Հողեգալուստ կ'իջնեմ Հուրի Մագթաղինեայ վերնատան մէջ .
 Հրեղէն լեզու հոն սաւառնեմ հողեաց հողիս Էջմիածին :

Բ

Ձի՛ փոյթ ինձ թէ՛ կը շնչէ՝ Նէ թէ կը ննջէ , մե՛տ թէ հեռին ,
 Զօրէն շողին՝ ո՛ւր նշուէ , արեւ աչքիս նոյն բիրն է միշտ ,
 Սիրոյ , գեղոյ խոչալս է , կը պաշտեմ զայն Աստուածիս չափ ,
 Ձի՛ փոյթ է թէ ո՞ր գեռունը չողիքն առ Նէ արծաթ նեաէ .
 Քան գեթներկինք բարձրն է Նէ , մարդ մտքին խի անհղելի՛ն ,
 Տիտան լերինք , Տեսիլ Սանդուխն խի չի հասնին մինչեւ ց'այն Վեր ,
 Երկու սրտեր սէկ հոգւոյ մէջ՝ եթերի պէս շամանգաղեալ ,
 Երկու հիւլէ՛ն՝ ոյք բղխեցին արեղերքը սին թոհրահէն ,
 Մարդ չի կարէ մեկնել զմեզ . զի Աստուածն է զմեզ զուգեր ,
 Եւ մեր սէրն է Աստուծո՛յ պէս ամենակալ ու անկարօտ ,
 Բիրտ բնազդին , պորտի , մարթի , միտի սէրը չէ՛ ներանը ,
 Մրուր , փրփուր չ'ունի բնաւ . Ներս սէրը , սէ՛րն անտպակ ,
 Շողն՝ արեւէն , բոյր՝ ծաղիկէն , սէրն ալ սրտէս չի քեցուրի բնաւ .
 Դիզէ՛ն է Նէ՛ որ խարուկէն փունիկ թռչի , յետ մահուանս խի .
 Պէնէլոպէ՛ն՝ ոյր ստապին յաւած հային դեռ դարուց աչք :

Գ

Եւ քանիօն գեղեցիկ է Հուրին քան հարան Երգ—Երգողին ,

Քան զիցանոյ, հրաշալի յաւերժարսերն հոներական,
 Լոյսէ, բոյրէ, երգէ, ժպտէ, ծաղկէ, ձիրքէ ընդելուզուած,
 Գեղոյ անհաս իտէալը համաստեղող մայր ճառագայթ:
 Մեր մաքեբու մոլորակի մթնոլորտին նոր փայլածու:
 Սիրամարգի առուն վարսամբ քղանցքներն են երկնածածան,
 Լուսածղի իւր դաստակէն վարդամառը նոր ծայր կուտայ,
 Ոսկեփնջիկ ճառագայթներ իւր փարսերն են թագազանդուր,
 Ուսերն ի վար փողփողէնէջ հոսած՝ ապա աշխարհք ծախած:
 Ծիւքն ու ծաղկունք՝ որով գարուն իւր եղեմներ կը նախշունեն,
 Իւր վարդավառ այտէն թափած ժպիտներու գոհարներն են,
 Բնութեան պէս՝ Նէ վեհաշուք պատկեր ու դէմք անճառ գեղոյ,
 Հայրիմ ի Նէ ես հիաքանչ, որպէս ովիէանն հայի երկինն:
 Ժպտի Նէ ինձ, որպէս լճակն արծաթհայլի ժպտի լուսինն,
 Ու լուսընկայ—ծաղիկ դէմքը դառնայ մաղնէտ յիս՝ յ'իւր բեւեռ:
 Անով արբշխ ու ներշնչուն երբ կ'ընկղմիմ յիւր ծոցն անհուն,
 Տիեզերքն ա՛լ ճմութիւծ թուղթ, ծալած, ծրարած ծակ մ'եմ նետած,
 Շուրջս են մարդերն ա՛լ դաշխաղէմ ուրուներու ցուրտ ստուերներ,
 Ու հետն ելնեմ երբ ի'պոտոյտ՝ սիրտը կուրծքիս տակ տրոխուն,
 Խռանն անոնց մեղ անծանօթ անտառուան է զոր կը ճեղքենք,
 Անոնց ապառքն անաստան են որ կը պատեն մեր Ովասիս,
 Մեր այդ գտեալ նոր զրախտն է, ուր կ'օթինք մենք՝ ջոխտն երջա-
 նիկ:

Հոն մանաւանդ արմաւենին ճիւղերն յերկինք բազկատարած՝
 Սոյերն հողմին ու ճնճղկան ճըլվըլումներն՝ որպէս աղօթք՝
 Լիաշուրթն հեղու վերէն նոր օրհնութիւն մեր հարսնիքին,
 Հոն խնկենեաց անտառները՝ մեղ տաղաւար անեղաչէն,
 Մարգն ու մարմանդ՝ կոնաչ գորգով փռուած դահլիճ ու բաստեռունք
 Հոն սիրական Հուրիս հետ զբոսաճեմ նոր բնակիչ,
 Մէն մի քայլի՝ հոն մեր սիրոյ ծրարենք բոյլ մը թարմ յիւստակ:
 Հոս ծաղիկ մը, թռչնիկ մը հոն, այլուր չուք մը մեղ բարեւեն:
 Իսկ ամենուր բնութիւնը՝ ոսկի դարուն հին նահապետ,
 Մեր աւետեաց այս երկրին մէջ՝ ուր բղխէ կաթն ու մեղրն հոսէ,
 Բացած ամուրաքն իւր շիրակեան ճօխ կոշունքներ կը շալլէ,
 Տեսարանէ ի՞տեսարան՝ անծայր շղթայ անճառ հրաշից,
 Տայ թղթատեղ Արարչութեան պատկերազարդ Մատեանն անհուն,
 Ոյր մէն մ'էջին վերայ հեւայ մատն ու վրձինն Ստեղծողին:
 Ահա սիրոյս Մայր—Աշխարհք, ուր հա՛րա պաշտեմ չքնաղ Հուրիս,
 Ձի՞ փոթ իրեն թէ խուժանք՝ դուրսը շրջուն քաւոր խաղայ,
 Թէ որք, կանայք դէմքերն հագած ցոցահանդես ժուռ դան փողոց,
 Քղանցքնուն հետ ախլմ ու փոշի քէշնելով տանց սրբութիւնքը:
 Թէ անծեղի շաղփաղփին ամբոխն իրեն ծնծղայ կը զօղանջէ,
 Նէ զեղճանիկ՝ վանդակին մէջ՝ սոխակ լեզուն՝ դաշնակ լարած,
 Կերգէ կեանքին ոսկի ժամերն՝ երջանկութեան սուրբ նշխարներ:

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Մնացեալն յաջորդ բուով)

UNIVERSITY OF MICHIGAN

LIBRARY

ANN ARBOR

1911

THE UNIVERSITY OF MICHIGAN
LIBRARY
ANN ARBOR
MICHIGAN
1911

THE UNIVERSITY OF MICHIGAN

LIBRARY

ANN ARBOR

MICHIGAN

THE UNIVERSITY OF MICHIGAN
LIBRARY
ANN ARBOR
MICHIGAN
1911



UNIVERSITY OF MICHIGAN

LIBRARY

ANN ARBOR

MICHIGAN

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՎԱՋԱՌԱՏՈՒՆ

Կ. ՓԻՇԹՕՖՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մասնագիր

11 Գատըղիւղ. Փափաղ փողոց 11

Վաճառատունս պատիւ ունի ծանուցանել Սկիւտարի և Գատըղիւղի յարկոյ ազգայնոց թէ Կաղանգի առթիւ ընտրանօք բերել տուած է ճաշակաւոր կաղանդէքներ և զանազան առարկաներ :

Սոյն վաճառատան մէջ պատրաստ կան նաեւ ամէն տեսակ զրաւ քոցական պիտոյք, ձեռագործի տերեւ, ամէն տեսակ թուղթ, թէյ, պաքսիմաղ, շոքոլա, հարսանեկան շաքար ևլն :

Գաւառներէն մեծ յանձնարարութիւնք կը կատարուին փութով և ճշտութեամբ : ՀԱՍՅԷ. Կ. Փիշթօֆճեան, Կալաթա, Տէիրմէն խան :



ԱԶՆԻՒ ԸՆԹԵՐՅՈՂ

Կ'ուղե՞ս հեշտիւ խմել

նխառն իւղ Մօռիւ Չկան

ՀԱՃԷ՝ ԴԻՄԵԼ

Կէտիք—Փաշա Պաշի

“ՍՈՒԼԹԱՆԻՔ” ծանօթ Գեղարան

Զօր կը վարէ Լ. Կիւմլիշեան

ՏԱՐՐԱԿԱՆ ԹՂԻԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՄՏԱԽՈՐ ԵՒ ԴՐԱԽՈՐ

Ա. և Բ. Տարի

Յօրինեց Դ. Գալաֆեան

Գ. անգամ տպագրուեցաւ կարեւոր յաւելումներով : Իբրեւ թուարանութիւն, իր տեսակին մէջ գերազանց է իր մէթոտով, իր պարունակած գործնական խնդիրներով, եւ շահեկան գիտելիքներով, յատկապէս Կրթական ծրագրին համաձայն օրինուած տարրական Գաղտնիքներու համար : Կը յանձնարարենք բոլոր թուարաններու ուղարկութեան Գին 4 աւկէս զրոյ. — Կեղրոնատեղի Պալենց Գրատուն :

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

“Հանրագիտակ,,ի վերաբերեալ ամէն գրոշքիշն պէտք է ուղղել “Ծաղիկ,,ի Տպարանը, առ Տնօրէնօրիշն “Հանրագիտակ,,ի :